

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԸ  
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի ծննդյան  
75-ամյակի առթիվ)

Աելիտա Դոլուխանյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են գտնվում հայ գրականության պատմության բոլոր փուլերն ու արդի ընթացքը, գրականության տեսության և հայ գրականության ժանրային համակարգին վերաբերող հարցերը, ինչպես նաև՝ եվրոպական հայագիտության և ի մասնավորի ֆրանսիական հայագիտության պատմությունը:



Հայ հին և միջնադարյան գրականության պատմությանը և առանձին հեղինակներին ու թեմաներին նվիրված գործերը գրված են սկզբնաղբյուրային նյութի, այդ թվում և ձեռագրային, քաջիմացությամբ և առկա հայկական, ռուսական ու եվրոպական տեսական գրականության համակողմանի իմացությամբ, որի շնորհիվ քննվող նյութը դիտարկվում է ընդհանուր միջնադարյան գրականության լայն համապատկերում:

Ասվածի բնորոշ օրինակն է «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարյան հայ քնարերգության մեջ» (Երևան, 1987 թ.) գիրքը: Նախ ներկայացվում է հոգու և մարմնի փոխհարաբերության հարցը անտիկ մտածողների և V դ. պատմագրական ու կրոնաաստվածաբանական երկերում, որոնք տեսական այն հիմքն են, որի վրա են բարձրացել այս թեմայով գրված չափաժողովածուները: Նշվում է, որ միջնադարյան հայկական համաբնույթ ստեղծագործությունները մի կողմից հիմնվել են հոգու առաջնայնության գաղափարի և մյուս կողմից՝ ժողովրդական կենսասիրության վրա:

Եթե այս թեման ենթադրում էր կրոնափիլիսոփայական և քնարական ըմբռնումների՝ տեսական հարցադրումների շրջանակում կատարվող քննություն, ապա Խաչատուր Կեչառեցուն և Ներսես Մոկացուն նվիրված ուսումնասիրություններն արդեն գրված են ավելի շատ պատմաբանասիրական մոտեցմամբ, քանի որ հիշյալ հեղինակների ստեղծագործությունները դիտարկվում են հայ ժողովրդի պատմության, ազատագրական ակնկալիքների ու հայ կյանքի վերածնության համատեքստում:

«Հայ քնարերգուներ» շարքով Խ. Կեչառեցու (1260–1330 թթ.) ստեղծագործությունների ընտրանին ներկայացնող գրքի առաջաբանում նախ ընդգծվում է «Ողբ վասն

աւերման տանս Արեւելեան» գործի կարևորությունը ժամանակի ազգային-քաղաքական ակնկալիքների առումով, թե այն ինչպես է սերտորեն առնչվում մեկ այլ ողբի՝ Ստեփաննոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին» ստեղծագործության հետ: Յույց է տրվում Կեչառեցու ստեղծագործության կապը ժողովրդական մտածողության, ինչպես նաև՝ նախորդող շրջանի հայ բանաստեղծության հետ: Գրքում տեղ գտած գործերը համեմատվել են Մատենադարանի ձեռագրերի հետ: Ծանոթագրություններում բացատրվել են աստվածաշնչային և պատմական հատուկ անունները, մատնացույց են արվել Աստվածաշնչի տարբեր հատվածների և հայ գրականության պատկերային համակարգի հետ կապված տողերը:

Նմանատիպ մոտեցմամբ է գրված նաև Ներսես Մոկացուն նվիրված մենագրությունը (Ս. Էջմիածին, 2009 թ.): Մինչ այդ Ա. Դոլուխանյանը հրատարակել էր ուշ միջնադարի այս հեղինակի ստեղծագործությունները: Մենագրության մեջ նրա գրական ժառանգությունը դիտարկվում է բանաստեղծի գործունեության համապատկերում: Ընդգծվում է նրա դերը XVII դ. հայ կյանքի վերանորոգության շարժման մեջ, գործունեությունը՝ Սյունյաց Մեծ և Լիվ անապատներում: Մանրամասնորեն վերլուծված է Երուսաղեմի 1187 թ. գրավման առթիվ գրված ողբը: Հայ ժողովրդի ազատագրական ակնկալիքների համալսումնաբերում է բացատրվում, թե հարյուրամյակներ առաջ տեղի ունեցած իրադարձությունն ինչու է նման ողբասացության նյութ դարձել:

Դոլուխանյանը, իր ուսումնասիրությունների առանցքում ունենալով հայ հին և միջնադարյան գրականությունը, զբաղվել է նաև XIX–XX դդ. հայ գրականության պատմության տարբեր հարցերի քննությամբ: Նա իր կարևոր մասնակցությունն է բերում և արդի գրականության ընթացքին՝ արձագանքելով Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ստեղծագործող հայ և օտարազգի գրողների երկերին:

Գիտական և հասարակական մամուլում, տարբեր գիտաժողովների նյութերում տեղ գտած հրապարակումներից բացի նա ունի նաև ժամանակակից երեք հայ հեղինակների երկերի վերլուծությանը նվիրված առանձին գործեր:

Նոր շրջանի գրականության հարցերը և տարբեր հեղինակների ստեղծագործությունները դիտվում են ազգային ու համամարդկային հարաբերակցության շրջանակում, արժարժված թեմաների հայ դասական գրականության մեջ իրենց ունեցած նախորինակների հետ հարաբերությամբ: Ասվածը վերաբերում է նաև Նորայր Ադայանի (Երևան, 2011 թ.) ստեղծագործությունների վերլուծությանը, թե նրա երկերում՝ որպես Մեծ Եղեռնի վերապրածների ժառանգ, անցյալից եկող ծանր հիշողությունն ինչպես է զուգակցվում այսօրվա աշխարհի ու քաղաքային միջավայրի պատկերման հետ:

Դոլուխանյանը՝ սփյուռքի մեր հայրենակիցներից առանձին, աշխատանքներ է նվիրել Շառլ Ազնավուրին և Ալիսիա Կիրակոսյանին:

«Շատլ Ազնավուրը բանաստեղծ» (Երևան, 2002 թ.) գրքում վերլուծությունը կատարվում է շանսոնի՝ որպես երգի խոսքի և երաժշտության միասնության շրջանակում: Հեղինակին հաջողվել է վեր հանել Ազնավուրի սիրո աշխարհը՝ տարաբնույթ դիտարկումներով ու հոգեբանական նրբերանգներով:

«Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» (Երևան, 2016 թ.) աշխատանքում բանաստեղծուհու գրական ժառանգությունը դիտված է հայ բանաստեղծության համատեքստում՝ թե՛ ամբողջության մեջ և թե՛ առանձին թեմաների ու պատկերների դեպքում, ինչպես օրինակ՝ մոխիրներից հառնելը Տերյանի հետ զուգահեռում: Նույնը վերաբերում է սիրո թեմայի ու հայրենների միջև առկա ընդհանրություններին: Այս գիրքը կարելի է համարել բնորոշ օրինակը, թե ինչպես պետք է զուգակցել և վեր հանել ազգային ակունքները և արդի գրականության համընդհանուր մոտիվները միևնույն ստեղծագործության մեջ:

Առանձին խումբ են կազմում հայ գրականության բանահյուսության և քննադատական մտքի պատմության դասավանդման մեթոդիկայի հետ կապված աշխատանքները: Այս ձեռնարկները նպատակ ունեն Մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետում հիշյալ առարկաներին վերաբերող դասընթացները և դրանցում վերլուծվող նյութը ներկայացնել գրքային ձևով: Նույն այս նպատակով հիշյալ ձեռնարկների վերջում կան հավելվածներ, ուր բերված են տվյալ թեմային վերաբերող բնագրային սկզբնաղբյուրային նյութեր, ինչպես նաև՝ տվյալ առարկայի ու նրանում հիշատակված թեմաների մասին գրականության մատենագիտական ցանկեր:

«Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը» (Երևան, 2004 թ.) աշխատանքում Չոպանյանը բնորոշվում է որպես մի գրականագետ, ում՝ հայ գրականության տարբեր հարցերին տրված գնահատականներն արդիական են նաև այսօր և գրված են անտիկ ու եվրոպական գրականության քաջիմացությամբ: Նա եվրոպական ու, հատկապես, ֆրանսիական ոճի գեղագետ էր, ժամանակի մշակույթի քաջիմացությամբ, ում գրածները վերլուծելու և արժևորելու համար հարկավոր են նույն այս հատկանիշները. ուստի պատահական չէ, որ այս թեմային հենց Դոլուխանյանն է անդրադարձել: Հիշյալ գրքույկը կարելի է համարել եվրոպական հայագիտությանը դիմելու նրա նախաքայլը:

Ոչ միայն գրականագիտական ու ճանաչողական, այլև ազգային-քաղաքական կարևորություն ունի «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը, ուր Դոլուխանյանը 7 գրքով ներկայացնում է եվրոպական տարբեր գիտնականների հայագիտական գործունեությունը:

Սեն Մարտենից Ֆրեդերիկ Ֆեյդի ընկած շրջանի հեղինակներին վերաբերող գրքերում երևում է ֆրանսիական հայագիտության զարգացման ընթացքը՝ հայագի-

տության ընդհանուր հարցերի մատնանշումից մինչև առանձին գիտակարգերին վերաբերող քննությունը:

Շարքը գիտաճանաչողական բնույթից գիտաքննական ուղղվածություն է ստանում, որովհետև ոչ միայն բերվում են եվրոպական հայագետների տեսակետներն ու հայտնված կարծիքները, այլև դրանք հարաբերվում են տվյալ հարցի վերաբերյալ այսօր առկա ըմբռնումների հետ, որի շնորհիվ մատնանշվում են ժամանակի քննությունը բռնած տեսակետները և այժմ պարզապես պատմական արժեք ունեցող և տվյալ ժամանակաշրջանի մեջ ստուգաբանվող կարծիքները:

Սա շատ կարևոր հարց է և պահանջում է ճիշտ մոտեցում. եթե առանց համապատասխան քննական վերաբերմունքի միայն նկարագրվի, թե ինչ է ասել այս կամ այն հայագետը, ապա կստացվի պարզ վերաշարադրանք: Նաև հակառակը՝ եթե հայագիտության այսօրվա չափանիշների և նվաճումների տեսանկյունից քննադատվեն XIX դ. հայտնված տեսակետները, ապա դա կլինի ոչ պատմական և հակագիտական մոտեցում:

Դոլուխանյանը պատմական մոտեցման և այսօրվա ըմբռնումների հետ հարաբերակցությամբ է գիտականորեն արժևորում եվրոպացի հայագետների թողած գիտական ժառանգությունը: Նման մոտեցմամբ ոչ թե գրում է, թե հայ դասական պատմագրության այս կամ այն երկի բնագիրը ինչ բացթողումներով է հրատարակվել, այլ թե հրատարակությունից հրատարակություն, շնորհիվ բնագրագիտական նոր սկզբունքների մշակման և տվյալ երկի նոր ձեռագրերի ի հայտ գալու, ինչպես է ձշտվել և ամբողջացել ու ներքին ճիշտ գլխակարգմամբ ներկայացվել տվյալ բնագիրը:

Քանի որ շարքի գլխավոր նպատակը հիշյալ գիտնականների տեսական ըմբռնումները և դրույթները հայ ընթերցողին ներկայացնելն է, ուստի թարգմանաբար մեջբերում կամ վերաշարադրում է նրանց հայտնած կարծիքներն ու տեսակետները այս կամ այն հարցի վերաբերյալ:

Ֆրանսիական հայագիտության արշալույսն է ներկայացնում Սեն Մարտենին (1791–1832) նվիրված «Սեն Մարտենը հայագիտության հիմնադիր» (Երևան, 2014) ուսումնասիրությունը: Դոլուխանյանը «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» ծավալուն աշխատանքի երկու հատորների առաջաբանները ներկայացնում է թարգմանաբար և հանգամանալից մեկնաբանություններով: Որպեսզի ընթերցողն առավել պատկերացում կազմի Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ Սեն Մարտենի գրածների մասին, թարգմանաբար բերում է Հայաստանի տեղանուններին նվիրված մի քանի տասնյակ բառահոդվածներ, որոնցում նշում է, թե դրանք հայ պատմիչների որ երկերում են հիշվում և նրանց հետ ստուգաբանական ինչ ավանդություններ են կապվում:

Ֆրանսիական հայագիտության ձևավորված ավանդներն այնուհետև շարունակվելու էին Մարի Ֆելիստե Բրոսսեով (1802–1999) և Էդուարդ Դյուլոբիեով (1807–1881):

Բրոսսեին նվիրված գրքում (Երևան, 2002) նրա հայագիտական աշխատանքները քննվում են վրացագիտության և ընդհանրապես արևելագիտական գործերի հետ որոշակի կապակցության մեջ: Վրաստանում ըստ արժանվույն է գնահատվել նրա գործունեությունը: Անգամ պատմագեղարվեստական ստեղծագործություններ են գրվել նրան նվիրված, ուստի Դյուլոբիանյանի գիրքը կարևորվում է նաև որպես հայ ժողովրդի երախտագիտության արտահայտություն մեծանուն գիտնականին, ում անվան հետ է կապվում Անիի գիտական ուսումնասիրության պատմության առաջին փուլը: Բրոսսեն Էջմիածնի հռչակավոր Մատենդարանի գրացուցակը ռուսերեն և ֆրանսերեն թարգմանություններով գիտական շրջանառության մեջ է դրել: Այսօր արդեն պատմական սկզբնաղբյուրի արժեք ունեն Բրոսսեի՝ Հայաստանի մասին նկարագրությունները և, հատկապես, տպավորությունները Ս. Էջմիածնից:

Ֆրանսիական հայագիտության Սեն Մարտենի ավանդների երկրորդ շարունակողը դարձավ Էդուարդ Դյուլոբիեն, ում նվիրված ուսումնասիրությունը (Երևան, 2004) գրված է նույն մեկնակետով՝ ներկայացնել հայագիտական աշխատանքները, հայ ժողովրդի պատմության ու գրականության ընթացքի կատարած պարբերացումը, ցույց տալ՝ հայ հին գրականությանը և մշակույթին նվիրված ինչ արժեքավոր բնորոշումներ ունի:

Ժամանակագրորեն հաջորդը Վիկտոր Լանգլուան է (1829–1869), ում նվիրված է համանուն աշխատանքը (Երևան, 2003): Լանգլուան, ինչպես և Դյուլոբիեն, ընդգծված հետաքրքրություն են ունեցել Կիլիկիայի հանդեպ, որը, թերևս, բացատրվում է Ֆրանսիայի արտաքին քաղաքականությամբ: Յուրաքանչյուր գիտնականի դեպքում հիշվում է, թե վերջինս հետազոտական ինչ նոր թեմա է քննել եվրոպական հայագիտության շրջանակում: Լանգլուայի համար որպես այդպիսիք նշվում են Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները և հայկական դրամագիտությունը:

Թե՛ Լանգլուայի և թե՛ ֆրանսիական մյուս հայագետների դեպքում Դյուլոբիանյանը հատուկ ներկայացնում է՝ նրանք ինչ կարծիքներ են հայտնել Մխիթարյան միաբանության մասին: Այդ կարծիքների մեկտեղումը Մխիթարյանների գիտագրական ժառանգության արժևորմանը նվիրված գեղեցիկ ժողովածու կարող է դառնալ:

Ֆրանսիական հայագիտության նոր փուլն են նշանավորում Ֆրեդերիկ Մակլերը և վերջինիս աշակերտ Ֆրեդերիկ Ֆելդին, որոնց գործունեությունը նաև արտահայտվում է ի նպաստ հայ դատի քարոզչությամբ:

Մակլերի գիտական աշխատանքների այս ուղղությունը ընդգծվել է նրան նվիրված ուսումնասիրության մեջ (Երևան, 2011): Մակլերը կազմել է Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրերի ձեռագրացուցակը: Ի տարբերություն իր նա-

խորդների՝ նա գրել է նաև նոր շրջանի հայ դասական գրողների մասին: Առանձնակի տեղ է հատկացրել Խաչատուր Աբովյանին. առաջիններից է, ով նկատել է «Վերք Հայաստանի» բանաստեղծական ներքին ուժը և էպիկական մեծ շունչը:

Գրքի վերջում՝ որպես հավելված, Դոլուխանյանը բերել է Սեբեոսից, Մխիթար Գոշից և Գրիգոր Տաթևացուց Մակկերի կատարած թարգմանությունները՝ հայերեն զուգահեռ բնագրերով:

Շարքը ժամանակագրորեն եզրափակվում է Ֆրեդերիկ Ֆեյդին նվիրված գրքով (Երևան, 2008): Այն կարելի է համարել եվրոպական նոր շրջանի հայագիտությանը նվիրված աշխատանք: Ֆեյդի «Սասնա Ծռերին», հայկական հմայիլներին և, ընդհանրապես, հայ ժողովրդական հավատալիքներին ու բարբառներին նվիրված ուսումնասիրություններով ու արևմտահայերենի քերականության ձեռնարկով էականորեն ընդլայնվեց ֆրանսիական հայագիտության ուսումնասիրությունների շրջանակը:

Նույն այս շարքում են քննված բելգիացի գիտնական Ֆելիքս Նևի հայ պատմագրությանը և, հատկապես, հայ եկեղեցական մատենագրությանը նվիրված աշխատանքները «Ֆելիքս Նևր և քրիստոնեական հայ մատենագրությունը» (Երևան, 2001) գրքում:

«Եվրոպացի հայագետներ» շարքի թեմատիկ ընդլայնված հանրագումարը կարելի է համարել «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց Այբուբենի մասին» (Երևան, 2005) գիրքը, որում բերված են ֆրանսագիր, գերմանագիր և անգլիագիր ուսումնասիրողների կարծիքները Հայոց Այբուբենի մասին: Ընդ որում ոչ թե Մաշտոցյան Այբուբենին նվիրված հոդվածներ են հավաքված, այլ Դոլուխանյանը մանրակրկիտ որոնմամբ ի մի է բերել տարբեր հեղինակների հայ մատենագրության և հայոց պատմության մասին հոդվածների և ուսումնասիրությունների այն հատվածները, որոնք վերաբերում են Մաշտոցին և Հայոց Այբուբենին:

Շարքի գրքերում շարունակ ընդգծվում է, որ հայ գրականությունը և հայ մշակույթը Եվրոպայի հայագետներին այն համոզումն է ներշնչել, որ հայերը, մնալով հայ մատենագրության ժառանգորդները, կպահպանեն իրենց ազգային ինքնությունը:

Կարող ենք ասել, որ նույն այս գիտակցումն է եղել և մնում է Աելիտա Դոլուխանյանի գիտական նվիրման, նրա գրած և գրելքի ուսումնասիրությունների հիմքում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ 2010-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ դառնալով հայագիտության և հասարակագիտության բաժանմունքի առաջին կին անդամը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ